ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարության միջև բժշկագիտության և առողջապահության ոլորտում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով բժշկության և առողջապահության բնագավառում ավանդական կապերի պահպանման ու զարգացման ցանկությունը,

հաշվի առնելով երկարատև և կայուն հիմքի վրա փոխշահավետ ու իրավահավասար համագործակցություն զարգացնելու Կողմերի փոխադարձ շահագրգռվածությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը լայն համագործակցություն կծավալեն բնակչության առողջության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված առաջնահերթ ազգային ծրագրերի ու խնդիրների լուծման ուղղությամբ:

Հոդված 2

Կողմերը, հաշվի առնելով շուկայական հարաբերությունների անցման առանձնահատկությունները, կնպաստեն առողջապահական հաստատությունների և մարմինների (այսուհետ՝ Համագործակցող կազմակերպություններ) միջև ուղղակի կապերի ընդլայնմանը:

Հոդված 3

Կողմերը փոխշահավետ համագործակցություն կզարգացնեն առողջապահության և բժշկագիտության հետևյալ ոլորտներում.

?? բնակչության առողջության առաջնային և մասնագիտական բժշկական օգնության ցուցաբերում մեծահասակ ու մանկահասակ բնակչությանը,
?? կանխարգելիչ բժշկություն և շրջակա միջավայրի պաշտպանություն,
?? դեղաբանություն և բժշկական սարքավորումներ, այդ թվում՝ արտադրություն,
?? սանատորաառողջարանային բուժում և վերականգնում,

?? գիտական և բժշկական կադրերի պատրաստում,
?? գիտական մշակումների համատեղ իրագործում,
?? առողջապահության մեջ համակարգչային տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում,
?? բնակչության բժշկական ապահովագրում,
?? առողջապահության համակարգի վերակառուցման մեջ առաջնայնության ճշտում,
?? բժշկական վիճակագրություն,
?? արտակարգ իրավիճակների բժշկասանիտարական հետևանքների կանխում և վերացում,
?? հրատապ տեղեկության փոխանակում:

Հոդված 4

Համագործակցող կազմակերպությունների կապերն իրականացվում են ուղղակի պայմանագրերի հիման վրա, որոնք պետք է համապատասխանեն երկու պետությունների օրենսդրություններին: Համագործակցող կազմակերպությունները կրում են պայմանագրային պարտականությունների կատարման իրավական և տնտեսական պատասխանատվությունը:

Հոդված 5

Կողմերն իրենց բուժական-կանխարգելիչ, գիտահետազոտական, սանատորաառողջարանային և առողջապահական այլ հաստատություններին փոխադարձաբար կօգնեն բուժական, խորհրդատվական, գիտական և այլ տիպի համագործակցության կազմակերպման հարցերում:

Հոդված 6

Կողմերը պայմանավորվեցին, որ, սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածին համապատասխան, միջգերատեսչական երկկողմ համագործակցությունը կիրականացվի կոմերցիոն սկզբունքով (պայմանագրային գներով կամ գործող գնացուցակներով)՝ խորհրդատվության, բուժման և վերականգնման նպատակով փոխադարձաբար հիվանդներ ուղարկելու, համատեղ գիտական հետազոտություններ անցկացնելու, կադրերի պատրաստման, մասնագետների և բժշկատեխնիկական տեղեկության փոխանակման, ախտորոշման ու բուժման նոր մեթոդների կիրառման համար մեթոդական նյութերի մշակման, սիմպոզիումների կազմակերպման, մենագրությունների

և հոդվածների հրատարակման, համատեղ արտոնագրերի ձևակերպման ճանապարհով:

Կողմերը պայմանավորվեցին ձեռնպահ մնալ միմյանց տնտեսական վնաս հասցնող գործողություններից:

Հոդված 7

Կողմերը փոխադարձ հաշվարկների և համագործակցության կոնկրետ ուղղությունների ու ձևերի մշակման նպատակով պայմանավորվեցին ստեղծել փորձագետների աշխատանքային մշտական խումբ:

Հոդված 8

Կողմերը միմյանց կտեղեկացնեն համագումարների, կոնֆերանսների և նմանատիպ միջոցառումների անցկացման ծրագրերի մասին: Իրենց երկրների գիտաբժշկական ու առողջապահական այլ կազմակերպությունների խնդրանքով և առաջարկով նրանք կարող են աջակցություն ցուցաբերել այդ միջոցառումներին գործուղող կողմի հաշվին մասնակցող մասնագետների ընդունելության հարցում:

Հոդված 9

Արտակարգ իրավիճակներում Կողմերն անվճար սկզբունքով կապահովեն անհետաձգելի բուժախորհրդատվական և մարդասիրական օգնություն:

Հոդված 10

Կողմերը կտանեն բժշկական բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների և ծրագրերի բարելավման համատեղ աշխատանք, ուղղակի ստեղծագործական կապեր կհաստատեն նշված հիմնարկությունների միջև, կոմերցիոն սկզբունքով կիրագործեն ասպիրանտների, ուսանողների և սովորողների փոխանակություններ:

Հոդված 11

Համապատասխան կառույցների փոխազդեցության ճանապարհով Կողմերը կոմերցիոն սկզբունքով վերարտակավորման հնարավորություն կտան իրենց բժշկական, դասախոսական և գիտական կադրերին՝ նրանց

հատկացնելով համապատասխան փուլերի ու աշխատանքային տեղում վերապատրաստման ուղեգրեր:

Հոդված 12

Կողմերը, ելնելով բժշկական տեխնիկայի, դեղորայքի արտադրության և փոխանակման եղանակների զարգացման ու կատարելագործման հնարավորությունից, կնպաստեն այդ ոլորտներում երկու պետությունների համագործակցության արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ տնտեսավարող սուբյեկտների միջոցով բժշկական նշանակության ապրանքների արտադրման համատեղ ձեռնարկությունների ստեղծման ճանապարհով:

Հոդված 13

Կողմերը կնպաստեն Անկախ պետությունների համագործակցության առողջապահության բնագավառի համագործակցության շրջանակներում բազմակողմ կապերի և կոոպերացիայի խորացմանը:

Հոդված 14

Կողմերը փոխհամաձայնությամբ կարող են փոփոխություններ և լրացումներ կատարել սույն Համաձայնագրի մեջ, որոնք կձևակերպվեն որպես առանձին արձանագրություն և կկազմեն սույն Համաձայնագրի անքակտելի մասը:

Հոդված 15

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ու կիրառման շուրջ առաջացած տարակարծությունները կլուծվեն Կողմերի ներկայացուցիչների մակարդակով՝ բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման ավարտի մասին դիվանագիտական ճանապարհով վերջին գրավոր ծանուցման օրվանից:

Նրա գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ տարվա համար, եթե Կողմերից որևէ մեկը

հերթական ժամկետի ավարտից 6 ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չտեղեկացնի Համաձայնագրի լուծարման մասին:

Կատարված է Մինսկ քաղաքում 2000 թվականի սեպտեմբերի 25-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի փետրվարի 15-ից: